***ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ***

***ԲԸԱՀ  ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ***

***ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ***

Պատվիրատուն՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, որը գտնվում է ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19 հասցեում, ստորև ներկայացնում է N ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԾՁԲ-14/3 ծածկագրով ԲԸԱՀ ընթացակարգի արդյունքում 2014 թվականի հունվարի 31-ին կնքված N ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԾՁԲ-14/3-009 պայմանագրում 2014 թվականի հուլիսի 31-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Վերոնշյալ պայմանագրի շրջանակներում լրացուցիչ ծառայությունների մատուցում

Փոփոխության նկարագրություն: Ավտոմեքենաների ընթացիկ վերանորոգման ծառայություններ:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ Կառավարության 10 փետրվարի 2011թ. 168-Ն որոշման <Գնումների գործընթացի կազմակերպման մասին> կարգի 71-րդ կետի 2-րդ ենտակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ռ. Հովհաննիսյանին:

Հեռախոս՝ /011/513435 :

Էլ. փոստ՝ gnumner@parliament.am :

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

31.01.2014թ. կնքված N ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԾՁԲ-14/3-009
պետական գնման պայմանագրի

ք. Երևան 31. 07. 2014թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ. Թովմասյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու)՝ մի կողմից, և <<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Գզրարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և ՀՀ կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշման <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի /այսուհետ՝ Կարգ/ 71-րդ կետի 2-րդ ենթակետի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով Կարգի 71-րդ կետի 2-րդ ենթակետի և 32-րդ կետի 4-րդ ենթակետի ցանկի 28-րդ տողը Կողմերը համաձայնության եկան պայմանագրի 4.1 կետում <<6000000>> թիվը փոխարինել <<19173200>> թվով:

1.2. Պայմանագրի N 2 հավելվածը խմբագրել նոր բովանդակությամբ, համաձայն N 1 հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 31.01.2014թ. կնքված N ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԾՁԲ-14/3-009 պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N1 հավելվածները համարվ է համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ***ՀՀ ԱԺ աշխատակազմ*** | ***<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ*** |
| ***ք. Երևան, Բաղրամյան 19*** | ***ք. Երևան, Բայրոնի 3*** |
| ***ՀՎՀՀ 00008519*** | ***<<Ամերիաբանկ>> ՓԲԸ*** |
| ***ՀՀ ՖՆ գործառնական վարչություն*** | ***Հ/Հ 1570003667300100*** |
| ***Հ/Հ 900011020089*** | ***ՀՎՀՀ 01557589*** |
| ***ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար*** | ***Գլխ. տնօրեն Վ. Գզրարյան*** |
| ***Հ. Թովմասյան*** | |
| ***(ստորագրություն)*** | ***(ստորագրություն)*** |
| ***Կ.Տ*** | ***Կ.Տ*** |

Հավելված N1
31.01. 2014թ. կնքված
N ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԾՁԲ-14/3-009 պայմանագրի
31.07.2014թ.կնքված N1 համաձայնագիր

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազ. դրամ

| Ձեռքբերվող ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին, ընդ որում՝ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I եռամսյակ | | | II եռամսյակ | | | III եռամսյակ | | | IV եռամսյակ | | | Ընդամենը |
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | | 3000.0 | 3000.0 | 6000.0 | 6000.0 | 6000.0 | 6000.0 | 19173.2 | 19173.2 | 19173.2 | 19173.2 | 19173.2 | 19173.2 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

*ՀՀ ԱԺ աշխատակազմ*
*ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19*
*ՀՎՀՀ 00008519*
*ՀՀ ՖՆ գործառնական վարչություն*
*Հ/Հ 900011020089*
*ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար*
*Հ. Թովմասյան*

---------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

*<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ*
*ք. Երևան, Բայրոնի 3*
*<<Ամերիաբանկ>> ՓԲԸ*
*Հ/Հ 1570003667300100*
*ՀՎՀՀ 01557589*
*Գլխ. տնօրեն Վ. Գզրարյան*

---------------------
(ստորագրություն)
Կ.Տ.